



#### 40. ՄԸՆԵՇ ԱԽՊԸՆԵՐԸ ՆԱև ԿՈՒՑՈՒՐ ԱԽՊԸՆԵՐԸ

Էրկու ախպըներ ըն ինոնմ: Մընեց փսակված, մին քանի խուխատար տընեռած ա ինոնմ, կումուրը՝ հալա աղափ: Տանը տիժեր պեները լոխ կումուր ախպըներն ար անում՝ քշեր-ցիրեկ հանդի պեն ար անում, տավարն ար պահում, քրտնընքու մաշի կորած ըխշադում ար:

Հունց ա պըտահում, մընեծ ախպորը մտկավն անց ա կենում, վըներ կումուր ախպորն անա ճոկվե: Մեհետ վըներ խոսկ ա պեց ինոնմ, տա կումուր ախպորն ասում ա.—Ես արտեն խուխատարկենգատար ըմ, տու վընել սօր-էքչինծ փսըկվըլական ըս, լավ կինի, վըներ ճոկվենքյ, կումուր ախպըներն ասում ա.—Դե վըներ օզում ըս հոկվենքյ, տոնը-տընեղը լոխ մին փայ անենքյ, մըներ հար էլ՝ մին փայ: Մընեց թա՝ հալա կենգանըս նհետ մալըհաթ անընմ, ետնան: Թյինամ ա կենգանը նհետ մալըհաթ անում, կնեզյն ասում ա.—Թու հար արտեն մըծացած, կումուրացած, հալա ինգլած մարթ ա, վըներ յոր օնընս, սաղ տանան-տընեղան, ըպրուատան ինգյիս, խոխեքըտ հինշավ ը՝ պըրհըլական, էն ա տահանք եր կալ, թող հարն էլ ինքյը յոր օնըն:

Մընեծ ախպըները կյամ ա կումուր ախպորը կոշտը, սա հըրցնում ա, թա վըներն ը՝ օզում, մընեց թա՝ տոնը-տընեղը, մակքյն ըմ օզում:

Փայ ըն տինում, իլած-շիլած լոխ մընեծ ախպըներն ա յոր օնում, հարը տամ կումուր ախպորը: Տահանք էլ լավ տոն-տընեղ ըն ինոնմ տիրած:

Կումուր ախպըները ամմընեն հինչ թողում ա, հորը շիլակում,

թլինամ ղարիբոթուն, վըեր ընդըեղ ըխշաղանք անըեւ Թյինամ ատուս կյամ մին հեռու քաղաք, մին տոն փռնում, հորը տինում ըտըեղ, ինըը թյինամ թըղաքըն մելգանը, վըերգեղ վըեր մշակ մարթուցը տանում ըն պինըցնում, կոխմինին տանում ըն, տրան տանում չըն Մին քանի օր թյինամ ա կյամ, վըեղ մինը հըրցընում չի, թա տու հու վը՞ս, հինչ ը՞ս: Մին օր էլ մին սիպտակ ծիյավուր մարթ կյամ ա տրան հըրցնում, թա՝ տու հու վը՞ս, տաթա՝ իստի մարթ ըմ, վըեղ մինն ինձ տանում չի պինըցնեւ: Տատուս ա օնում մին մանեթ տամ, յոր չի օնում, ասում ա.—թա պին օնըես ընելի, ինձ տար պինըցըու, հախը տու, օզում լրմ տուված փողըտ: էտ սիպտակ ծիյավուրը թա՝ հալա եր կալ, ետնանէտ էլ կինի: Ցոր ա օնում, թյինամ տոնի: Էքյսը կյամ ա, էլլա էտ սիպտակ ծիյավուրը պըտահում ա, մին մանեթ էլ մեհենգի տամ, էն մին օրն էլ մին քանի վըեսկի յա տամ, թա՝ տու վըեր քո հոր մին փայ ըս տիրալ, մուկրյը, ապրանքը՝ մին փայ, էտ վըեսկեն աստված ա քըզետե ղարկալ, տար դուքլընն պեց ըրա, առիտոր ըրա:

Տա թյինամ ա մըեծ դժկըլընն պեց անում, ըսկսում ամմըենէ հինչ իժան ծախելը: Տըեղետ դուքյանշիքյն էլ թյինամ ըն թաքավըերեն կյենդյատ անում, թաքավըերն էլ ասում ա.—Ապրանքն ուրանն ա, հինչ կյինավ օզե, կըծախեւ: Տահանք վըեր շատ թյինամ ըն կյամ, թաքավըերն էտ տղեն ծեն ա տամ, հըրցնում, տա յել ասում ա.—Կյուղոթուն շրմ անում, ապրանքը իմն ա, հինչ կյինավ օզըեմ, կըծախենմ: էտ խոսկերքը թաքավըերեն շատ տոր ա կյամ, ասում ա.—Կըեր իտի խըելունք տղա յըս, իմ փըեսաս պիտի տըենասա: Էտ տղան էլ ասում ա.—Իրեք իրավունք պիտի տաս ինձ՝ թողես ծրի ճաշարան, ծրի համամ, մինգիել առանց շհադ աղող մին ճեղաց պահեմ, տըրանա ետը քու փըեսատ կըտըեռնամ: Թաքավըերն ասում ա՝ թուղեցեւ:

Տրանա ետը ախճիդյն էտ տղեն նհետ փսակում ա, էտ տղանե թյինամ ա ճեղացը, համամը, մինգիել ճաշարանը պեց անում, ժողովուրթը կյամ ըն օտում-խմում, ուրանց դանն էլ ծրի աղում, թյինամ: Տա կնգյանն էլ ասում ա.—Թու ժառաներավըտ-պինավըտ իմ հոր լավ կըպահես կնեզյն էլ հորը առոք-փառոք պահում ա, ամմըեն օր լըզըցնում, ուտըցնում-խըմըցնում, քոն անում:

Մահանց թողենքը ըստըեղ, մեհենգի խարար տանք մըեծ ախապորն անա: Տա յէլ մհկըլը, ապրանքը, ամմեն հինչ լոխ ծըխլըխորալ ա, կերալ ըն, մնացալ սոված, տկլոր: էն օրն ա ինգյեն, վըեր օրեն հացն էլ շար կարում թիննա: Մին օր էլ ըսկա-

նում ա, թա էսհինչ հեռու քըղաքումն իստի մին ծիրի  
ճաշարան կա: Էլ խոխեցը, կնեգյը էյնը շի կլամ, եր ա  
կենում փըյադա թյինամ տուս կլամ էտ քաղաքը, վըեր լի-  
չա մեհետ կոշտ փորուք հաց օտըե: Հըսնում ա ըտեղ, թյինամ  
ճաշարանը քթենում, նի մննում վըեր նստե, կումուր ախպըերը  
տըեսնում ա, ճինանչում, ասում ա՝ ը՛շը, էս ա ախպըերը եկալ  
ա. մուտանում ա, ասուն.—Ախպըե՛ր, ախպըե՛ր, հալա մին կաց,  
պեն ըմ ասում: Տա կումուր ախպորը ճինանչում շի, ասում ա.—  
Հալա մին կաց, սոված ըմ, հաց օտըեմ, ետանան կումուր ախպըերը  
պովուրներեն ասում ա.—Մրան լավ հաց տուպըեց, թողեց հինչ  
օզում ա, ուրան բյեփավը օտըե-խմըե:

Մըեծ ախպըերը լավ օտում ա-խըմում, քուշտանում: Կումուր  
ախպըերը տրա նհետ մարթիք ա տինում, ասում.—Տարեց շո-  
քերը փուկսեցեց, իրեսը վըեր անել տուվեց, էս ա ըստըեղ էս  
տեսը-տենը պըրծնեմ, կլամ ըմ:

Տահանք տանում ըն տրան լըղցնում, իրեսը վըեր անում,  
շորերը փոխում, կումուր ախպըերն էլ կլամ ա, հըրցնում, թա  
ինձ ճինանչում ը՞ս, մըեծ ախպըերը թա՝ շէ: Տա թա՝ ես քու ախ-  
պըերն ըմ, պա էտ հունց ա՝ պըտահալ, վըեր ինգյալ ըս ըստըե-  
ղեց, կնեգյըտ, խոխեցյը հունց ը՞ն յոլլա թյինամ: Մըեծ ախ-  
պըերը թա՝ գե հինչ ա սրեմ, ըսելի շի: Կումուր ախպըերը թա՝ դե  
տու ըստըեղ կաց, դուքյըններեն-պենին եշի, ես թյինամ ուրանց  
հըվաքեմ, պիրիմ: Մըեծը թա՝ չէ՛, թյինա միլ, ես կըդյինամ, կը-  
յիսկըրնըերեն շոր շի կա, լոխ տկլոր նի տըեռած ըն տոնը, հը-  
մանչում ըն, թա տանան տուս կյան: Կումուր թա՝ վըելինչ,  
հունց կանըեմ, վըեր հըմանշիլ շըն:

Տա լոխճինին հետե շորեր ա կարել տամ, յոր օնում, ծին  
նստում, թյինամ տուս կլամ ախպորը կնգաննու խոխոցը կոշտը,  
ծեն տամ, ախպորը կնեգյը ճինանչում շի, ասում ա.—Տկլոր ըմ,  
կարել շըմ տուս կլամ: Տաքյիրը կապած շորերը տունը զաթավը  
թող ա անում, ինքյը զրադ կենում: Ախպորը կնեգյը շորերը կլենում  
ա, խոխոցն էլ կլեց տամ, տուս կլամ, թա՝ զարիք ախպըեր, տու հու  
վը՞ս, ճինանչում շըմ: Տա թա՝ քու տաքյիր ըմ, եկալ ըմ ծըեղ  
տանըեմ կոշտը, ախպըերը էլ էն ա քշտիս:

Տա տըեղատ ծի յա փոնում, ախպորը կնգանն էլ, խոխոցն էլ  
հըվաքում, տանում կոշտը: